լու ամենալաւ ձեւն է, մանաւանդ տղէտ զանգուածներին, երբ դուք վկաներ ու վկայութիւններ էք առաջ բերում, հեղինակաւոր վկաներ ու վկայութիւններ, եւ այդպիսով ապացուցանում էք, որ նաեւ ուրիշներն են այդպէս մտածում ու գործում: Այդ զէնքին դիմում է մեր հեղինակը:

Նա յայտարարում է, որ իր քարոզած մտքերը իր անձնական ուղեղի յղացումները չեն միայն, ոչ էլ իր անձնական ցանկութիւնները եւ կամ արտասովոր ու չեղած մի բան, այլ՝ որ ինքն ասում է այն, ինչ որ իր սեպհական աչքերովը տեսել է «բարեպէս կառավարուող» երկիրների մէջ: Նա շեշտում է, որ այդ մտքերը Եւրոպայի շատ մասերում արդէն իրականութիւն են դարձել, որ օրէնքի թագաւորութիւնը արդէն կատարուած փաստ է մի քանի երկրներում, որ թագաւորները արդէն ենթարկւում են ժողովրդի դրած օրէնքներին: Յատկապէս յիշատակում է «ազգ» մեծ Բրիթանիացւոց», ուր «թագաւորի պատիւ են անուանում ազատութիւնը եւ այն, որ ամէն մարդ իր ունեցուածքի ապահով տէրն է» (78):

Անցնելով միւս առարկութեանը՝ նախ ինքը ընդդիմախօսներին հարց է տալիս, որ եթէ մի ազգ չի կարող ինքն իր վրայ թագաւորել, հապա ի՞նչպէս է, որ մի անհատ կարող է մի ամբողջ ժողովրդի վրայ թագաւորել: Այս բանը նա համարում է քանականութեան ընդդէմ: Ապա ցոյց է տալիս, որ երկիրը կառավարելու եւ օրէնքներ դնելու համար ամենեւին կարիք չկայ, որ ամբողջ ժողովուրդը հաւաքուի միատեղ — մի բան, որ խսկապէս անհնարին է. այլ կը հաւաքուին միայն դրա ներկայացուցիչները — Հայաստանի համար մօտաւորապէս 500 հոգի — եւ ազգի անունից նրանք կը կարգադրեն ամէն ինչ:

Իր այս միտքն ապացուցելու համար՝ բերում է հետեւեալ օրինակը. կալի մէջ հաւաքուած է բիւր քլա1) ցորեն. նրա յատկութիւնն իմանալու համար հարկաւոր չէ տեսնել ու քննել ամբողջ շեղջը, այլ բաւական է նրանից վերցնել միայն մի բուռ: Ճիշդ այդպէս էլ հարկաւոր չէ, որ ամբողջ հայ ազգը հաւաքուի միասին՝ երկիրը կառավարելու համար. իւրաքանչիւր 12 հազար տունը կ'ընտրեն երկ-երկու ներկայացուցիչ, որոնք կը փոխարինեն իրենց ընտրողներին եւ նրանց փոխարէն ու նրանց ուղածի պէս կը կառավարեն երկիրը, կը հրատարակեն օրէնքներ, կը նշանակուին օրէնքը գործադրող պաշտօնեաներ եւն. (64):

Ցոյց տալու համար, որ մի այդպիսի կառավարութիւն միանգամայն հնարաւոր է, բերում է հին Հռոմի օրինակը, թէ ինչպէս նա՝ Հռոմը, կարճ ժամանակի ընթացքում, ոչընչութիւնից աճեց ու զօրացաւ, իր որդեգրած կարգերի շնորհիւ: Անկախութեան, օրէնքի եւ հանրապետութեան շնորհիւ՝ նա շուտով դարձաւ համաշխարհային մի մեծ պետութիւն եւ ամբողջ մարդկութեան ու աշխարհի բախտը, 600 տարի շարունակ, պահեց իր ուժեղ ձեռքերում: Եւ որքան ժամանակ որ նա անկախ հանրապետութիւն էր եւ կառավարւում էր Ծերակոյտից դրուած օրէնքներով — դնալով աւելի ու աւելի բարգաւաճում էր, դառնալով ամբողջ աշխարհի նախանձի առարկան:

Բայց այն օրից, երբ ժառանգական միապետութիւնը հաստատուեց այնտեղ եւ վերացաւ հանրապետական վարչաձեւը, երբ վերացան «հանրութեան» կամքի արտայայտութիւնը հանդիսացող օրէնքները եւ միապետի քմահաճոյքն սկսեց թագաւորել, երբ վերացաւ հաւասարութիւնը եւ ժողովուրդը բաժանուեց դասակարգերի՝ տիրողների եւ տիրուածների, արտօնեալների եւ զրկուածների — այդ օրից սկսուեց Հռոմի դժբախտութիւնը:

Վախճանը ամէնքին յայտնի է. ինչպէս արագ զօրացել էր, այնպէս էլ արագ քայքայուեց, մինչեւ որ վերջնականապէս ընկաւ:

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տեսանք արդէն, որ «Որ. Փառաց»ի մէջ Շահամիրեանն առաջադրում է մի շարք գաղափարներ, որոնց իրագործումով — նրա կարծիքով — հայ ժողովուրդը ոչ միայն պիտի ազատուէր օտարների լծից, այլ եւ յաւիտենապէս երջանիկ պէտք է ապրէր իր սեպհական հայրենիքում:

Այժմ փորձենք ցոյց տալ այն գործօնները, որոնք կարող էին այսպէս կամ այնպէս ազդած լինել Շահամիրեանի մտքերի վրայ: Բայց նախ քան այդ՝ երկու խօսքով նորից վերյիշենք այդ

1) Քլան չափ է: